

## Տաթևիկ Աթայան

### ՔԱՂԱԳՐԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏԻ «ՏԱՐԵԳՐՔԻՄ»

**Սմբատ Սպարապետ, Մատթեոս Ուռհայեցի, սկզբնաղբյուր, բնագիր,  
քաղագրություն, հավելում, հապավում, ոճ**

Թեև Սմբատ Սպարապետի պատմական աշխատությանն անդրաձարծել են մի շարք ուսումնասիրողներ, սակայն մինչ այժմ չկա «Տարեգրքի» աղբյուրագիտական և պատմագրական քննությանը նվիրված առանձին ուսումնասիրություն: Ուստի առկախ են մնում ինչպես «Տարեգրքի» աղբյուրների, այնպես էլ հեղինակի ստեղծագործական աշխատանոցի վերլուծման խնդիրները, մինչդեռ դրանք համակողմանի լուսաբանման կարիք ունեն: Մասնավորապես «Տարեգիրքը» հատուկ ուշադրության է արժանի միջնադարյան պատմիչների համար տիպական քաղագրական եղանակի կիրառման ինքնատիպությունների տեսանկյունից: Հարցն այն է, որ Սմբատ Սպարապետի երկի առաջին հատվածը երկար ժամանակ համարվել է պարզունակ քաղագրություն և չի շարժել ուսումնասիրողների հետաքրքրությունը: Սակայն «Տարեգրքի» նախնական հատվածը պարունակում է մի շարք նկատառելի շեղումներ և տարբերություններ, որոնք վկայում են այն մասին, որ նա բառացիորեն չի հետևել սկզբնաղբյուրին, այլ իր երկի քաղագրական մասում էլ ներկայանում է որպես սեփական հեղինակային ինքնագիտակցությամբ օժտված պատմիչ:

«Տարեգրքի» բնագրագիտական ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ոչ միայն խորապես ընկալել և հասկանալ այս ստեղծագործության բնույթը, այլև մի շարք կարևոր եզրակացություններ անել քաղագրողի հետաքրքրությունների շրջանակի, աշխարհայացքային պատկերացումների, գաղափարական դիրքորոշման վերաբերյալ:

Ներկա հոդվածի նպատակն է վերլուծել սկզբնաղբյուրների քաղագրման յուրահատկությունները՝ Սմբատ Սպարապետի և նրա անմիջական նախորդների՝ Մատթեոս Ուռհայեցու և Գրիգոր Երեցի երկերի բնագրերի մանրագնին համեմատության միջոցով:

Հանրահայտ է, որ Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրությունը» և Գրիգոր Երեցի «Շարունակությունը» «Տարեգրքի» հիմնական սկզբնաղբյուրներն են՝ 951-1163 թթ. պատմական անցուդարձերի շարադրման համար: Առհասարակ Սմբատ Սպարապետին բնորոշ է բնագրի բառացի վերարտադրությունը, որի պատճառով «Տարեգրքի» որոշ դարձվածքներ կարող են դիտվել որպես Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրության» տարընթերցումներ և ծառայել նախնական բնագրի որոշ հատվածների վերականգնման համար: Ուստի և հենց նման դեպքերում է, որ շատ ուշագրավ են դառնում Սմբատ Սպարապետի կատարած սակավաթիվ

ավելացումներն ու առաջին հայացքից աննշան թվացող շեղումները, որոնք իրականում Սմբատ Սպարապետի պատմագրական հայացքների ու համոզումների դրսևորումներ են:

Նախ՝ անդրադառնանք ոճական այն փոփոխություններին, որոնք կատարել է Սմբատ Սպարապետը սկզբնաղբյուրի բնագիրը փոխանցելիս: Քաղազրման ընթացքում սկզբնաղբյուրի ոճը լիովին պահպանելը, անկասկած, չափազանց բարդ խնդիր է: Որոշակի շեղումներն անխուսափելի են: Դրանցից չէր կարող խուսափել նաև Սմբատ Սպարապետը, եթե նույնիսկ փորձեր հավատարիմ մնալ Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրության» հեղինակային առանձնահատկություններին: Բայց ձգտում էր արդյոք նա աղբյուրի ոճի պահպանմանը, թե՛ ոչ: Երկու տեքստերի համադրումը ցույց է տալիս, որ քաղազրելով Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրությունը»՝ Սմբատ Սպարապետը հավատարիմ է մնացել իր նախորդի բովանդակությանը, սակայն ոչ ոճի առումով: Այսպես, Մատթեոս Ուռհայեցու երկի ոճաբանական ինքնատիպություններից են մանրամասնությունների առատությունը, համեմատությունների բազմազանությունը, աստվածաշնչյան մեջբերումների հաճախադեպությունը, հերոսներին տրվող ընդգծված բնութագրումները, երկարաշունչ ճառերը և այլն: Մինչդեռ Սմբատ Սպարապետի աշխատության համապատասխան հատվածներն աչքի են ընկնում մանրամասնությունների սակավությամբ, ճառերի հակիրճությամբ, կերպարներին տրվող գնահատականներում՝ զսպվածությամբ և այլն: Բերենք հատկանշական մի քանի օրինակ. հայոց ՆԿԵ թվականի ներքո Մատթեոս Ուռհայեցին գրում է.

*«Յորժամ թուականութիւնն Յայոց հասանէր ի յամս - ՆԿԵ, զարթեալ աստուածասաստ բարկութիւնն ի վերայ ամենայն քրիստոսական ժողովրդեանն եւ երկրպագողաց սուրբ Խաչին, զի զարթեալ վիշապն մահաշունչ հանդերձ մահաբեր հրով, եհար զհաւատացեալս Սրբոյ Երրորդութեանն: Յայսմ ի թուականիս սասանեցաւ հիմունք առաքելականացն եւ մարգարէականացն, վասն զի օձք թեւաորք հասին եւ կամին ցոյանալ ընդ ամենայն աշխարհս հաւատացելոցս Քրիստոսի. այս է առաջին ելն արեանարբու գազանացն: Ընդ աուրսն ընդ այնոսիկ զօրաժողով լինէին խուժագուժ ազգն անօրինացն, որք անուանեալ կոչին Թուրք, եւ հասեալ մտանէին յաշխարհն Յայոց ի Վասպուրական գաւառին եւ անողորմ ի բերան սրոյ կոտորէին զհաւատացեալքս Քրիստոսի»<sup>1</sup>:*

Սմբատ Սպարապետը քաղազրում է.

*«Ի թուին Յայոց ՆԿԵ [465=1016] զարթեալ աստուածասաստ բարկութիւն ի վերայ քրիստոնէիցն, եւ ելին անթիւ խուժադուժ ազգն որ թուրք կոչէր, ահագին բազմութեամբ, եւ հասեալ մտանէին յաշխարհն Յայոց, ի գաւառն Վասպուրականի, եւ սկսան յանխնայ կոտորել զհաւատացեալսն Քրիստոսի»<sup>2</sup>:*

<sup>1</sup> Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 46:.

<sup>2</sup> Սմբատայ Սպարապետ, Տարեգիրք, Վենետիկ, 1956, էջ 23:

Այստեղ չկան ոչ Մատթեոս Ուռհայեցու համեմատությունները և ոչ էլ թշնամու բնութագրումները: Քաղազրելով աղբյուրի հաղորդումը՝ Սմբատ Սպարապետը փոխանցում է միայն նրա հիմնական բովանդակությունը՝ առանց մանրամասնությունների: Նույն հատվածում՝ ձևակառուցման անհաշիվ ելքը արձանագրելուց հետո, Մատթեոս Ուռհայեցին գրում է.

*«...եւ զնացին յնստան քաղաքն եւ պատմեցին թագաւորին Սենեքարիմայ եւ ասացին զորպիսութիւն այլազգեացն կերպարանաց: Եւ լուեալ Սենեքարիմայ յոյժ վիրաւորեալ լինէր. ոչ եկեր եւ ոչ էարբ, այլ կայր մտախորհ, լի տրտմութեամբ եւ զգիշերն ամենայն անքուն անցուցանէր եւ նստեալ քննէր զժամանակագրութիւնս եւ զասացուածս աստուածախօս տեսանողացն, զսրբոց վարդապետացն, եւ գտանէր գրեալ ի գիրսն զժամանակն ելանելոյ Թուրքաց զօրաց եւ զօրականաց. եւ ծանեալ զկորուստ եւ զկատարած ամենայն երկրի. եւ գտանէր ի գիրսն գրեալ այսպէս, եթէ «Ի ժամանակին յայնմիկ փախիցեն յարեւելից յարեւմուտս, ի հիւսիսոյ ի հարաւ, եւ հանգիստ ոչ գտանեն ի վերայ երկրի, վասն զի արեամբք ծածկին դաշտք եւ լերինք. եւ այս էր զոր ասաց Եսայի եթէ «Սմբակք երկվարաց նոցա հաստատուն»<sup>1</sup>:*

Քաղազրելով նույն դրվագը՝ Սմբատ Սպարապետը գրում է.

*«Եւ յորժամ դարձան յետս պատմեցին Սենաքերիմայ զնշան կերպարանաց այլազգեացն. եւ նա յոյժ վիրաւորեալ ոչ եկեր եւ ոչ արբ, այլ լայր եւ ապաշաւէր զաւերումն աշխարհին Յայոց, եւ զկորուստ քրիստոնէիցն»<sup>2</sup>:*

Այս հատվածը փոխանցելիս Սմբատ Սպարապետը նույն կերպ հապավում է աստվածաշնչյան մեջբերումը և նյութի այլ մանրամասները՝ փոխանցելով միայն դրվագի հիմնական բովանդակությունը:

Համադրենք ևս մեկ հատված.

Մատթեոս Ուռհայեցի.

*«Յայսմ ժամանակիս զօրաժողով արար ամիրայն Պարսից՝ որ ասի Օշէն, եւ յապականութիւն դարձոյց զբազում գաւառս, եւ արեան ջաղխիս արարեալ զդասս հաւատացելոցն Քրիստոսի. եւ բազում սուգ եւ խաւար տարածեցաւ ի վերայ երկրի ի ձեռաց անօրինիս այսմիկ: Եւ գայր խաղայր բազմութեամբ զօրօք եւ արար ձմերոց ի Սեւ լեանն. եւ ահագին արեան հեղութիւն եւ կոտորած լինէր յամենայն գաւառն, եւ բազում անձինք ի սրբոց կրօնաւորացն մատնեցան ի բերան սրոյ եւ յայրումն հրոյ եւ եղեն կերակուր գազանաց եւ թռչնոց եւ ոչ ժամանեցին ծածկիլ հողով, վասն զի մնացին անթաղք մինչեւ յաւիտեանս. եւ անթիւ վանորայք եւ գեղք այրեցան հրով, որք երեւին մինչեւ ցայսօր. եւ Սեւ լեանն եւ ամենայն գաւառն ի ծայրէ ի ծայր լցաւ արեամբ կրօնաւորաց եւ քահանայից եւ արանց եւ կանանց ձերոց եւ տղայոց՝ ըստ բանի մարգարէին՝ որ ասէ, եթէ «Ձերիտասարդս նոցա եկեր հուր, եւ վասն կուսանաց նոցա ոչ որ սզացաւ. եւ քահանայք նոցա անկան ի սուր, եւ զայրիս նոցա ոչ որ էր որ լայր » եւ թէ՛ «Յեղին զարիւնս նոցա որպէս ջուր շուրջ զերուսաղեմաւ, եւ ոչ որ էր որ թաղէր զնոսա»: Արդ՝ այսպիսի կատարած բարկութեան էած*

<sup>1</sup> Մատթեոս Ուռհայեցի, էջ 48:

<sup>2</sup> Սմբատ Սպարապետ, էջ 23:

ի վերայ հաւատացելոց անօրէնն եւ չար գազան Օշէն, որ եւ անպատմելի է ասացողացս գործ նորա»<sup>1</sup>:

Սմբատ Սպարապետ. «Չայնու ժամանակաւ անօրէն ամիրայ մի ի Պարսից, Օշին անուն նորա, բազմութեամբ զօրօք գայր, եւ զամենայն գաւառս դարձուցանէր յապականութիւն: Եւ եկեալ մերձ ի Սեաւ Լեառն անհնարին կոտորածք լինէին ի գաւառի անդ, եւ բազում վանորայս, եւ միանձունք ծգնաւորք սրախողխող եղեալ բարձան, եւ գաւառքն ամենայն հրոյ ծարակ եղեն, եւ ամենեքեան ի սուր սուների մաշեցան»<sup>2</sup>:

Կարելի է նշել նման բազմաթիվ այլ օրինակներ, որոնցում հեղինակը քաղաքներով իր սկզբնաղբյուրը, այլափոխում է վերջինիս ոճը: Սակայն Սմբատ Սպարապետի ոճական նորամուծությունները զուտ բնագրի կրճատման ցանկության արդյունք չեն, ինչպես կարող է թվալ առաջին հայացքից, այլ ավելի շատ դրանք հեղինակի նպատակային աշխատանքի դրսևորումներ են: Որոշ շեղումներ, անշուշտ, կարելի է համարել տարընթերցումներ, սակայն ընդհանուր պատկերը դրանից չի փոխվում: Նշենք, որ Սմբատ Սպարապետը, հավատարիմ չմնալով իր սկզբնաղբյուրին, հապավում է ոչ միայն «Ժամանակագրությունում» նկարագրվող իրադարձությունների մամրամասնություններն ու սուրբգրային մեջբերումները, այլ նաև աղբյուրի կրոնա-բարոյական բնույթի հաղորդումները, հերոսների ծավալուն ճառերը և այլն: Գրելով Կոստանդին ԺԱ Դուկաս կայսեր՝ հայոց եկեղեցու նկատմամբ կիրառած հալածանքների մասին՝ Մատթեոս Ուռհայեցին մեջբերում է Գագիկ Բ Բագրատունու պատասխան գրությունը<sup>3</sup>, որը «Ժամանակագրությունում» մի քանի էջ է զբաղեցնում: Ի հակադրություն նախորդ պատմիչի Սմբատ Սպարապետը այս հատվածը փոխանցում է ընդամենը երկու նախադասությամբ.

*«Նզովեաց եւ զամենայն չար դասսն հերեսիոտացն, որք յանդգնեցան խօսել զչար բանս ի սուրբ Երրորդութիւնն եւ ի փրկագործ տնօրէնութիւնն Քրիստոսի: Եւ զայս այսպէս գրեաց ընդարձակագոյն բանիւ, եւ խօսեցաւ առաջի թագաւորին եւ ամենայն հռետորացն Յունաց, եւ հաճեալ հաւանեցոյց զամենեսեան»<sup>4</sup>:*

Մատթեոս Ուռհայեցին հոգևորական է, այստեղից էլ նրա ստեղծագործությանը հատուկ կրոնա-բարոյախոսական խրատականությունը, որն, ըստ էության, անհարիր է Սմբատ Սպարապետի մտակերտվածքին: Ուստի, հարկ չհամարելով անխաթար պահպանել բնագիրը, հեղինակը վերապատմում է այդ դրվագները: Նա հաղորդում է դրանց կարճ և կոնկրետ բովանդակությունը, իսկ երբեմն էլ բոլորովին հապավում է սկզբնաղբյուրի ընդարձակ վկայությունները: Սմբատ Սպարապետը առանձնապես հետաքրքրություն չի տածում սկզբնաղբյուրի այնպիսի հաղորդումների նկատմամբ, որոնք, ըստ Մատթեոս Ուռհայեցու, աստվածային նախախնամության մասին վկայող երևույթներ են (զալիք արհավիրքները կանխատեսող բնական աղետներ, գիսաստղի հայտնվել և այլն): Նման բովանդակություն ունեցող հատվածները

<sup>1</sup> Մատթեոս Ուռհայեցի, էջ 185

<sup>2</sup> Սմբատ Սպարապետ, էջ 23:

<sup>3</sup> Մատթեոս Ուռհայեցի, էջ 163-178:

<sup>4</sup> Սմբատ Սպարապետ, էջ 65:

Սմբատ Սպարապետը բաց է թողնում կամ փոխանցում է ամփոփ ձևով, ընդամենը մեկ-երկու նախադասությամբ:

Ներկայացնելով 519/1070թ. գիսատղի հայտվելը Մատթեոս Ուռհայեցին գրում է.

*« Ի թուականութեանս Յայոց -ՆժԹ երեւեցաւ աստղ մի գիսատր յերկինս, զոր տեսեալ բազմաց ասէին թէ՛ Այս այն նշանն է, որ եղև յառաջագոյն, ապա արինհեղութիւն զկնի. եւ դարձեալ ի գիշերի միում երեւէր, որպէս թէ ամենայն աստեղք յերկիր հեղուին. եւ երկեան ամենայն ազգ եւ ազգինք եւ յահեղն եւ ի սոսկալի նշանէն սարսեալ դողային, վասն զի այսպիսի նշան ոչ տեսեալ էաք երբէք եւ ոչ լուեալ յառաջնոցն. եւ այնպէս կարծեցին, թէ այս է, զոր ասաց Փրկիչն թէ՛ Եղիցի նշան ի վերջին ժամանակին յարեգակն եւ ի լուսին եւ յաստեղս շարժմունք եւ արհաիրք, որպէս ի սուրբ Աւետարանին: Եւ արդ այս եղև սկիզբն կատարածի եւ կրկին աւերման աշխարհիս յանօրէն զօրացն Թուրքաց վասն բազմացեալ եւ ծովանման մեղաց մերոց, քանզի՝ Ամենեքեան մեղան եւ նուաղեցան ի փառացն Աստուծոյ եւ թէ՛ Ոչ ոք է արդար եւ ոչ մի. սովորեցան ամենեքեան ի ճանապարհս անօրէնութեան եւ սիրեցին առաւել զմեղս քան զարդարութիւն եւ ոչ երբէք խոտորին ի չարեացն ի բարին, վասն որոյ եւ բարկացուցանեմք զԱնբարկանալին Աստուած ի վերայ մեր եւ զկն, Որոյ բնութիւնն Իւր քաղցր է միշտ, խոտոր գնացիւք մերովք ցասուցանեմք ի վերայ մեր. եւ երբեմն երբեմն խրատէ զմեզ եւ զկծեցուցանէ զմեզ ազգաւ անմտաւ եւ ոչ այնու եւս դառնամք ի խենէշ գնացից մերոց, քանզի՝ Միտք որգոց մարդկան հաստատեալ է ի խնամս չարին. վասն որոյ իբրեւ զմրրիկ հասանէ ի վերայ մեր բարկութիւն եւ պատուհասն եւ յաճախեն հողմք փոթորկեալ չար հինիցն Իսմայէլեան որդոցն ի վերայ մեր եւ ոչ տան մեզ դուլ եւ հանգիստ. բայց Ինքն Տէր քաղցրութեամբ հայեսցի ի գործս ձեռաց Իւրոց . ամէն»<sup>1</sup>:*

Սմբատ Սպարապետը նույն հատվածը քաղագրում է հետևյալ կերպ. «Ի թուին ՆժԹ [519=1070] երեւեցաւ աստղ գիսատր յերկինս, զոր տեսեալ բազմաց ասէին. այս այն նշանն է որ եղև յառաջ, եւ ապա արինհեղութիւն զկնի. եւ դարձեալ ի գիշերի միում երեւէր որպէս թէ ամենայն աստեղք յերկիր հեղուին, եւ այնպէս կարծեցին թէ այս Տեառն հրամանն է, թէ ի կատարածի աշխարհիս եղիցի նշան յարեգակն եւ ի լուսին եւ յաստեղս»<sup>2</sup>:

Այստեղ չկա ոչ Մատթեոս Ուռհայեցուն բնորոշ բառապաշարը և ոչ էլ՝ ծավալը: Ընդհանուր առմամբ Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրությունում» առկա պատկերացումները հրաշքների և նախանշանների մասին տիպիկ միջնադարյան են, դրանք ներկայացվում են որպես կարևոր գործոն և հետևաբար՝ պատմական իրադարձությունների բաղկացուցիչ մաս: Մատթեոս Ուռհայեցու տեսանկյունից նախանշաններում և հրաշքներում առհասարակ արտահայտվում է աստծո կամքը, հրաշքները նախորդում են զործողությունների ընթացքին, ծառայում են որպես հավատացյալներին ուղղված ազդանշան: Մատթեոս Ուռհայեցին իր խնդիրն է համարում ներթափանցել կատարվածի «աստվածային իմաստի» մեջ, բացահայտել դրանում ի հայտ եկած աստծո մտադրությունը: Դրա հետ մեկտեղ պատմիչը ժամանակակիցներին և սերունդներին տալիս է «աստվածային իմաստության» դասեր, սովորեցնում կատարել համապատասխան ենթադրություններ արարչի

<sup>1</sup> Մատթեոս Ուռհայեցի, էջ 193:

<sup>2</sup> Սմբատ Սպարապետ, էջ 71:

կամքի վերաբերյալ՝ ելնելով բնության համանաման երևույթների դիտարկումներից: Երևույթը, իհարկե, տիպիկ միջնադարյան է և նրանում արտասովոր ոչինչ չկա. մի կողմից՝ Մատթեոս Ուռհայեցիին տուրք է տալիս հրաշքներին, մյուս կողմից՝ շատ դեպքերում զգոն և իրատեսորեն է ներկայացնում պատմական իրադարձությունները: Սակայն Սմբատ Սպարապետը՝ ի տարբերություն իր սկզբաղբյուրի, անսովորի մասին խոսում է մի փոքր ավելի զուսպ, երբեմն դրան չտալով նույնիսկ հրաշքի նշանակություն, այն դիտարկում է որպես ինչ-որ արտասովոր դեպք, այդ պատճառով իսկ՝ ապշեցնող կամ զարմացնող: Մատթեոս Ուռհայեցու համար երկնքում գիսաստղի հայտնվելը անպայման նախնշան է, որի հետ նա կապում է և՛ իր երկյուղը, և՛ հույսերը: Սմբատ Սպարապետը, հիշատակելով միևնույն փաստը, ներկայացնելով գիսաստղի հայտնվելը՝ այն ամենևին էլ չի մեկնաբանում որպես նախանշան, միայն խոսում է այն իրարանցման մասին, որը առաջ է գալիս դրա հետևանքով: Սմբատ Սպարապետը հրաշքներին և նախանշաններին հատկացնում է ընդհամենը մի քանի տող, սակայն որպես իր ժամանակի զավակ, նա նույնպես չի թաքցնում իր վախն ու հրճվանքը, սակայն դա անում է իրեն բնորոշ ձևով՝ զգուշորեն: Սմբատ Սպարապետը խուսափում է ընկղմվել այդ իրադարձությունների մանրամասնությունների մեջ: Այս առումով նրա աշխատությունում ի հայտ է գալիս գերբնականի վերաբերյալ հաղորդումները նվազագույնի հասցնելու հակումը, որով էլ հեռանում է իր սկզբնաղբյուրից: Սմբատ Սպարապետը այս կերպ է վարվում, հավանաբար, նաև այն պատճառով, որպեսզի շատ չհեռանա իր աշխատության բուն նպատակից: Նա, ճիշտ է, կասկածի տակ չի դնում անմիջական կապը երկնային երևույթների և այն իրադարձությունների միջև, որոնք տեղի են ունենում երկրի վրա, սակայն շատ չի գայթակղվում այդ կապերի նկարագրություններով կամ մեկնություններով, ինչպես Մատթեոս Ուռհայեցին: Սմբատ Սպարապետին ավելի շատ կատարվածը հետաքրքրում է որպես փաստ, որը զբաղեցնում է նրան որպես պատմիչի, ով արձանագրում է այն ամենը, ինչը արժանի է գտնում հիշատակման: Հարկ է նշել, որ նման հիշատակումները համեմատական առումով «Տարեգրքում» քիչ են, ինչը կարող է պայմանավորված լինել նաև հեղինակների սոցիալական պատկանելության տարբերությամբ: Նման տեղեկություններով հագեցած են հատկապես եկեղեցականների երկերը, որոնցում արտահայտվում են նրանց հոռետեսական տրամադրությունները, ինչն ավելի քիչ է գրավում աշխարհիկ հեղինակներին՝ ի հայտ բերելով վերջիններիս անտարբեր վերաբերմունքը «հրաշքների» նկատմամբ: Նշենք, որ երբեմն Սմբատ Սպարապետի աշխատությունում ինչ որ առումներով «աստվածայինը» ընդհանրապես նդվում է հետին պլան՝ ճանապարհ բացելով իրականության և պատմական ճշմարտության այն ընկալման համար, որը հարիր է հեղինակի պատկերացումներին: Հարկ է նշել, որ չնայած իր սկզբնաղբյուրը քաղազրեկիս Սմբատ Սպարապետը ստիպված է եղել կրճատել կրոնական բնույթի երկար ճառերը, նախանշանների և հրաշքների մասին պատմող դրվագները, սակայն դա նրան չի խանգարել աղբյուրի ճշգրիտ փոխանցման հարցում: Համառոտելով իր նախորդների անհամեմատ ընդարձակ պատումները՝ Սմբատ Սպարապետը անփոփոխ է թողել իրադարձությունների զարգացման

տրամաբանությունը ու գաղափարական ուղղվածությունը: Այդ իսկ պատճառով ոճական փոփոխությունները ավելի շատ նպատակադրված աշխատանքի արդյունք են, քան միայն բնագրի կրճատման ցանկություն: Մյուս կողմից՝ Սմբատ Սպարապետը, կրճատելով «Ժամանակագրությունում» երբեմն էջեր զբաղեցնող տվյալները, դրանք վերարտադրում է ճշգրիտ, սակայն ոչ բնագրի ձևով: Այսպիսով, նա հետևողական ու հավատարիմ է սկզբնաղբյուրին, երբ փոխանցում է նրա բովանդակությունը, բայց ոչ նրա ձևն ու ոճը:

Հարկ է նշել, որ Սմբատ Սպարապետը նույն կերպ է վարվում նաև Գրիգոր Երեցի շարադրած դրվագների դեպքում: Քաղազրելով վերջինիս երկը՝ հեղինակը ոչ միայն չի փոխանցում նրա ոճը, այլև կատարում է ժամանակագրական բնույթի որոշ շտկումներ: Նշենք, որ Գրիգոր Երեցի «Շարունակության»-ը բնորոշ են անցուդարձերի արձանագրման հաջորդականության պարբերական խախտումներ: Սմբատ Սպարապետը, որ խստորեն հետևել է ժամանակագրության պահպանմանը, ստիպված է եղել վերականգնել նաև իրադարձությունների ժամանակագրական հաջորդականությունը, որին Գրիգոր Երեցը, ինչպես նշվեց, ոչ միշտ է հետևել:

Հարկ է անդրադառնալ նաև «Տարեգրքի» քաղազրական հատվածի շարահյուսական կառուցվածքին, քանզի երկերի համադրումը ցույց է տալիս, որ Սմբատ Սպարապետը պարբերաբար կառուցվածքային բնույթի փոփոխություններ է կատարել: Մասնավորապես նա խուսափում է փոխանցել աղբյուրի բարդ կառուցվածք ունեցող նախադասությունները, որոնց կուտակումը խրթին է դարձնում բնագիրը: Չխորանալով երկերի շարահյուսական կառույցների վերլուծության մեջ՝ նշենք միայն, որ մեր ուշադրության կենտրոնում ոչ թե այն հարցն է, թե կոնկրետ ինչ փոփոխություններ է կատարել Սմբատ Սպարապետը աղբյուրի շարահյուսական կառույցը փոխանցելիս (այս հարցը դուրս է տվյալ հոդվածի շրջանակներից), այլ այն, թե ինչ նպատակով է նա այդպես վարվել: Այստեղ կարևոր է, որ Սմբատ Սպարապետը խուսափելով աղբյուրի նյութի ընկալումը բարդացնող մի շարք դերբայական դարձվածներից՝ հասել է առավել հստակության ու մատչելիության: Այստեղից էլ կարելի է եզրակացնել, որ հեղինակի՝ սկզբնաղբյուրի ոճից հրաժարվելու պատճառներից է նաև իր աշխատությանը պարզություն և հստակություն հաղորդելու ցանկությունը:

Նշենք, որ Սմբատ Սպարապետը չի սահմանափակվում միայն ոճական փոփոխություններով: Նա չի բավարարվել սկզբնաղբյուրի վերարտադրությամբ և քաղազրելով՝ կատարել է եական բնույթի փոփոխություններ:

Այսպես, երկերի համադրումը ցույց է տալիս, որ Սմբատ Սպարապետը մինչև երկի շարադրմանն անցնելը հստակ պատկերացում է ունեցել գրվելիք աշխատության թեմատիկ ընդգրկման վերաբերյալ: Նման եզրակացության առիթ են տալիս հեղինակի կողմից սկզբնաղբյուրի մի շարք հաղորդումների բացթողումներն ու կրճատումները: Օրինակ, հայոց ՆԼԵ թվականին տեղի ունեցած իրադարձությունների մասին Մատթեոս Ուռհայեցին գրում է.

*«Իսկ յաուրս ժամանակաց տոմարիս Հայոց ի յամի -ՆԼԵ ապստամբեաց ոմն իշխան ի վերայ թագաւորին Վասլի, իշխանն Հռոմոնց Սորավարդ, եւ արար ւաւերակս զմեծ մասն Հռոմոնց աշխարհին. եւ շրջեալ երթայր ընդ երկիր սրով եւ գերութեամբ: Եւ ժողովեալ զօրքն*

Հռոմոնց ի վերայ նորա, հալածական արարին զնա յաշխարհն Տաճկաց, զոր յետ ամի միոյ եկեալ մեռանէր ի թագաւորէն Վասլէ»<sup>1</sup>:

Սմբատ Սպարապետը չի փոխանցում սկզբնաղբյուրի այս հաղորդումը: Այն, իհարկե, կարելի էր վերագրել քաղազրոյի անուշադրութեանը, սակայն երկու երկերի մանրամասն զուգադրումը ցույց է տալիս, որ ոչ էական թվացող այս հապավումը միակը չէ: Ավելին, նման բացթողումների հանդիպում ենք երկի ամբողջ քաղազրական մասում<sup>2</sup>, ուստի և այս հապավումների բնույթը ստիպում է մտածել, որ դրանք ամենևին էլ պատահական չեն: Ուրեմն, ինչո՞վ կարող են պայմանավորված լինել նմանօրինակ հապավումները: Ակնհայտ է, որ իրենց բնույթով երկրորդական թվացող այս հաղորդումները չեն արժանացել հեղինակի ուշադրութեանը, սակայն ինչու՞: Այստեղ պետք է հաշվի առնել երկու կարևոր հանգամանք. նախ՝ հեղինակը խնդիր չի ունեցել գրել «Պատմութիւն», որն ամենայն հավանականութեամբ ուներ իր նախորդը՝ Մատթեոս Ուռհայեցին, (գոնե իր աշխատութեան առաջին հատվածում): Հետևաբար, այս հապավումները կարող են պայմանավորված լինել երկի ժանրային բնույթով: Մյուս կողմից՝ պետք է նկատի ունենալ ևս մեկ, ոչ պակաս կարևոր հանգամանք, այն, որ «Տարեգրքի» կառուցվածքում նմանօրինակ մոտեցումը պայմանավորված է հեղինակի նախասիրություններով, ինչպես նաև հասարակութեան այն հատվածի հետաքրքրություններով, որոնց համար նախատեսված էր տվյալ աշխատությունը: Այս պնդումը հիմնավորվում է նաև նրանով, որ նմանատիպ մեջբերումների չենք հանդիպում նաև Գրիգոր Երեցի «Շարունակություն»-ից կատարված քաղազրական հատվածում: Ուստի, կարելի է ենթադրել, որ այս հապավումները միտված չեն զուտ սկզբնաղբյուրի տեքստի կրճատմանը: Քաղազրելով իր աղբյուրի տեքստը՝ Սմբատ Սպարապետը մշակել է նրա հաղորդումները՝ դրանք համապատասխանեցնելով իր աշխատանքի շարադրման նպատակին: Այդ մասին են վկայում ոչ միայն վերը նշված հապավումների բնույթը, այլև հեղինակի որոշ հավելումներն ու բառացի քաղվածքները Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրությունից»: Դրանք օգնում են պատասխան տալ նաև այն հարցին, թե քաղազրելով և մշակելով իր աղբյուրի տեքստը՝ ինչի վրա է առաջնահերթ ուշադրություն դարձրել հեղինակը: Երկու երկերի բաղդատումը ցույց է տալիս, որ ի հակադրություն վերը նշված դրվագների հապավման՝ Սմբատ Սպարապետը ձգտել է հետևողական լինել աղբյուրի այն հաղորդումները փոխանցելիս, որոնք վերաբերում են քաղաքական պատմութեանը, ինչպիսիք են, օրինակ, Գագիկ Բ-ի գահակալումը (Ս. Սպարապետ, էջ 36/Ս. Ուռհայեցի, էջ 86), նրա՝ Բյուզանդական կայսրության մայրաքաղաք հրավիրվելն ու արգելափակվելը (Ս. Սպարապետ, էջ 40/Ս. Ուռհայեցի, էջ 94-95), Սենեքերիմ Արծրունու և նրա որդիների Սեբաստիա տեղափոխվելը (Ս. Սպարապետ, էջ 24/Ս. Ուռհայեցի, էջ 49) և այլն: Այն, որ վերը նշված բնույթի հաղորդումները գտնվել են հեղինակի հետաքրքրության շրջանակներում, վկայում են ոչ միայն դրանց

<sup>1</sup> Մատթեոս Ուռհայեցի, էջ 39

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 58-62, 63, 84-85, 109, 123-124, 132, 144-145, 151-152, 158, 232, 237, 310, 325 և այլն:

<sup>3</sup> Սմբատ Սպարապետ, էջ 65:

գրեթե բառացի և ամբողջական փոխանցումները, այլ նաև հեղինակի կատարած որոշ շտկումներն ու հավելումները: Օրինակ, անդրադառնալով թորոս իշխանի և Կոնդրասկավիս բերդի տերերի՝ Մանդալեի որդիների հարաբերություններին՝ Մատթեոս Ուռհայեցին գրում է, որ նրանք խոստացել էին բերդը թորոսին հանձնել, քանի որ սահմանակից էր թորոսի գավառին: Սմբատ Սպարապետը, փոխանցելով նույն հատվածը, լրացնում է աղբյուրի հաղորդումը՝ նշելով. «... խոստացեալ էին (Մանդալեի որդիները – Տ. Ա.) տալ զբերդն զայն ի թորոս, զի սահմանակից իւր էր **եւ ի Թուրքէն նեղէին յոյժ**»<sup>1</sup>: Կամ՝ ներկայացնելով թորոս իշխանի և Մանդալեի որդիներից մեկի երկխոսությունը՝ Մատթեոս Ուռհայեցին գրում է. « ... եւ զօծեալ թագաւոր Յայոց սպանանէիք եւ կամ զի՞նչ պատասխանի ետուր ազգին Յայոց». եւ լալախառն սկսաւ չարաչար հարկանել զնա՝ մինչեւ սատակեցաւ դառնահառաչ մահուամբ»<sup>2</sup>:

Սմբատ Սպարապետը փոխանցում է. «... եւ դուք որ զայր հզօր եւ զօծեալ թագաւոր, որ առ ձեզ ի համբոյր խոնարհեցաւ որպէս հայր յորդի եւ սիրեաց զձեզ **Քազիկ սպանիք զնա, զի՞նչ պատասխանի ունիք տալ ազգիս Յայոց. եւ ի սրտէն յարեաւ եւ էառ գաւազան կռանի, յարձակեցաւ ի վերայ նորա եւ լալախառն սկսաւ ուժգին հարկանել, մինչեւ անդէն սատակեցաւ**»<sup>3</sup>:

Բերված օրինակներում հատվածների համադրումը ցույց է տալիս, որ տվյալ դեպքում Սմբատ Սպարապետը ոչ միայն չի հապավում իր աղբյուրի հաղորդումները, այլ նաև հավելում է դրանք՝ Մատթեոս Ուռհայեցու երկում բացակայող ինչպես փաստացի, այնպես էլ նկարագրական բնույթի որոշ մանրամասներով: Առաջին հայացքից այդ հավելումները կարող են թվալ ոչ էական, սակայն եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ Սմբատ Սպարապետի «Տարեգրքի» քաղազրական հատվածը առհասարակ աչքի չի ընկնում նկարագրական բնույթի մանրամասնությունների առատությամբ և կերպարներին տրվող բնութագրումների բազմազանությամբ, ապա ընդգծված դարձվածքները որոշակի նշանակություն են ստանում: Այսպես, մի դեպքում Սմբատ Սպարապետը Կոնդրասկավի բերդի նկատմամբ թորոս իշխանի պահանջը հիմնավորում է ևս մեկ հավելյալ փաստարկով (թշնամուց նեղվելու հանգամանքը), իսկ մյուս դեպքում՝ լրացնում թորոս իշխանին վերագրված ուղղակի խոսքը: Ի՞նչ նպատակով է Սմբատ Սպարապետը հավելում այդ մանրամասները: Ամենայն հավանականությամբ հեղինակը անտարբեր չէ նկարագրվող իրադարձությունների նկատմամբ և վերապատմելով արտահայտել է կատարվածի նկատմամբ իր սեփական վերաբերմունքն ու գնահատականը: Հավանական է նաև, այն, որ Մատթեոս Ուռհայեցու հաղորդածը հեղինակին թվում է հակիրճ և ոչ լիարժեք, ուստի ձգտելով ներկայացվող հատվածը դարձնել արտահայտիչ ու հիմնավորված՝ նա դիմել է լրացուցիչ մանրամասների օգնությանը:

Այսպիսով, նշված օրինակները վկայում են, որ Սմբատ Սպարապետը ուշադրությունը կենտրոնացրել է այնպիսի «մանրուքների» վրա, որոնք կարևոր է

<sup>1</sup> Սմբատ Սպարապետ, էջ 136

<sup>2</sup> Մատթեոս Ուռհայեցի, էջ 320:

<sup>3</sup> Սմբատ Սպարապետ, էջ 137:

համարել: Նման օրինակի հանդիպում ենք նաև Ռուբեն իշխանի մասին պատմող դրվագներում: Ըստ Մատթեոս Ուռհայեցու՝ Թորոս Ա-ի պապը՝ Ռուբենը, Գագիկ Բ-ի զորքից էր<sup>1</sup>, իսկ Սմբատ Սպարապետը մեկ բառով փոխում է իր աղբյուրի այս հաղորդումը, նշելով, որ Ռուբենը «**յիշխանացն Գագկայ թագաւորի էր**»<sup>2</sup>: Այն, որ նա անտարբեր չէ սկզբնաղբյուրի՝ քաղաքական պատմությանը վերաբերող հաղորդումների նկատմամբ, վկայում են նաև այլ բնույթի փոփոխությունները: Օրինակ, Մատթեոս Ուռհայեցին գրում է, որ Վասիլ Բ կայսրը «*հանդիպեալ զօրացն Բուլղարաց, դարձոյց ի փախուստ զնոսա եւ վարէր առաջի իւր: Եւ նեղեաց Վասիլն զաշխարհն Բուլղարաց սովով, սրով եւ գերութեամբ եւ դարձաւ եմուտ ի Կոստանդնուպօլիս մեծաւ ուրախութեամբ*»<sup>3</sup>: Իսկ Սմբատ Սպարապետը, վերապատմելով այս հատվածը, նշում է. «*եւ ոչ այլ ինչ կարաց առնել, բայց միայն գերեաց գեղորայս եւ դարձաւ ի Կոստանդինուպօլիս, եւ զօրացն ինչ ոչ կարաց առնել*»<sup>4</sup>, փոխանցվող հատվածում արտահայտելով իր վերաբերմունքը Վասիլ Բ-ի բուլղարական արշավանքի մասին: Նմանօրինակ շեղումների հանդիպում ենք նաև «Տարեգրքի» այլ հատվածներում: Օրինակ, խոսելով Ալեքսիոս Ա կայսեր և առաջին խաչակիրների միջև կայացած համաձայնության մասին՝ Մատթեոս Ուռհայեցին հաղորդում է, որ «*լուեալ զայս ամենայն (խաչակիրների ծանր դրության մասին – Տ.Ա.) թագաւորն Ալէքսն, վերացոյց զսուրն եւ ոչ ետ այլ պատերազմ ընդ նոսա: Եւ ամենայն բանակն առհասարակ եկեալ իջաւ ի դուռն Կոստանդնուպօլիս եւ խնդրէին անցանել ընդ ծովն Ովկիանոս. եւ թագաւորն Ալէքս արար սէր եւ միաբանութիւն ընդ ամենայն իշխանսն Փռանգաց եւ տարաւ զնոսա ի սուրբն Սոփի եւ ետ նոցա բազում տուրս ոսկոյ եւ արծաթոյ*»<sup>5</sup>: Սմբատ Սպարապետը փոխանցում է. «*Եւ ապա թագաւորն Ալէքս արար ընդ նոսա սէր, **բայց ոչ բոլորով սրտիւ ...***»<sup>6</sup>:

Նշված օրինակները բավական են ցույց տալու համար, որ սկզբնաղբյուրի քաղաքական պատմությանը վերաբերող հաղորդումները փոխանցելիս Սմբատ Սպարապետը ներկայանում է որպես ինքնուրույն հեղինակ, ով չի թաքցնում սեփական հայացքները անցյալի պատմությունը ավանդելիս, թեև դա անում է գրեթե աննկատ: Այսպիսով, նյութի վերլուծությունը մեր առջև բավականին հստակ պատկեր է բացում. «Ժամանակագրություն»-ից կատարված՝ քաղաքական պատմությանը վերաբերող հաղորդումների բառացի քաղումներն ու դրանց որոշ լրացումները հակակշիռ են աղբյուրի հաղորդած քաղաքական պատմությանը չվերաբերող հատվածների հապավմանը, որն էլ ի հայտ է բերում հեղինակի հետաքրքրությունը առաջինի և դրա բացակայությունը՝ երկրորդի նկատմամբ:

<sup>1</sup> Մատթեոս Ուռհայեցի, էջ 321:

<sup>2</sup> Սմբատ Սպարապետ, էջ 137:

<sup>3</sup> Մատթեոս Ուռհայեցի, էջ 40:

<sup>4</sup> Սմբատ Սպարապետ, էջ 19:

<sup>5</sup> Մատթեոս Ուռհայեցի, էջ 255:

<sup>6</sup> Սմբատ Սպարապետ, էջ 100:

Ուրեմն, մի կողմից՝ հապավված հատվածների, իսկ մյուս կողմից՝ բառացի փոխանցումների ու հավելումների բնույթը ստիպում է մտածել, որ մինչ երկի շարադրմանն անցնելը հեղինակը հստակ պատկերացում է ունեցել աշխատության բովանդակային ընդգրկման մասին: Այդ է վկայում նաև Գրիգոր Երեցի «Շարունակության» համադրումը «Տարեգրքի» համապատասխան հատվածների հետ, օրինակ, Յեթում իշխանի մահվան մասին վկայությունը, նրա որդու՝ Օշինի իշխանության գլուխ գալու իրողությունը և այլն: Նշենք նաև, որ Գրիգոր Երեցի «Շարունակություն»-ից կատարված փոխանցումներում քաղաքական պատմությանը վերաբերող ճշտումներն ավելի շատ են:

Նյութի վերլուծությունը ի հայտ է բերում ևս մեկ հետաքրքիր իրողություն. ձգտելով բառացի փոխանցել աղբյուրի՝ քաղաքական պատմությանը վերաբերող հաղորդումները՝ Սմբատ Սպարապետը հետևողական չէ կերպարների բնութագրումները փոխանցելու հարցում: Խոսելով Բյուզանդիայի հարուցած դավանական վեճերի մասին՝ Մատթեոս Ուռհայեցին գրում է, որ պատրիարքը, կղերականներն ու մեծամեծ իշխանները միացան «*չարաշունչ եւ պիղծ խորհրդոյ անօրէն թագաւորին* (Կոստանդին ԺԱ Դուկաս - Տ. Ա.)», ով ցանկանում էր իր «*դիւարուն եւ գիտոնափնդոր եւ զթերակատար գիւատսն հաստատել ի Յայք*»: Մատթեոս Ուռհայեցին, չզսպելով իր բարկությունը, կայսրին համարում է դևերով գայթակղված մեկը, ով, «*կամեցաւ նմանել առ թշնամոյ*», «*կամեցաւ զլուսաւոր հաւատս խաւարեցուցանել եւ զժմարտութիւնն ընդ ստութեանն փակել*», և «*զչար*» խորհուրդով իր մոտ կանչեց Սեբաստիայի հայ իշխաններ Ատոմին ու Ապուսահլին և այլն: Ահա թե ինչպես է փոխանցում վերը նշված հատվածը Սմբատ Սպարապետը. «*Եւ յայսմ ժամանակի թագաւորն, Տուկիծն եւ պատրիարզն, եւ ամենայն կլերիկոսքն միաբանեալ կամէին բառնալ զկարգս եւ զաւանդութիւն Յայաստանեաց եկեղեցոյ. եւ առաքեցին ի Սեբաստիա եւ կոչեցին զորդիսն Սինաքերիմայ՝ զԱտոմ եւ զԱպուսահլն, զալ ի Կոստանդինուպոլիս...»<sup>1</sup>: Սմբատ Սպարապետը ոչ միայն հարկ չի համարում փոխանցել սկզբնաղբյուրի այդ հաղորդումները, այլ նաև անցնում է նման բնույթի տեղեկությունների կողքով՝ շրջանցելով դրանք զգույշ ձևակերպումների օգնությամբ: Նա նույն կերպ է արձագանքում նաև Մատթեոս Ուռհայեցու այն հաղորդումներին, որոնցում վերջինս մերկացնում է Բյուզանդական կայսրության՝ հայոց նկատմամբ վարած քաղաքականության ողջ նենգությունը: Մատթեոս Ուռհայեցին մեծ ցավով է նշում, թե ի վիճակի չէ մեկ առ մեկ պատմել հայոց երկրի ավերածության մասին, «*զոր յանօրէն եւ յարեանարբու զազանացն զօրացն թուրքաց կրեաց յանտիրութենէ, ի սուտ պահապանացն, ի տկար եւ ի թուլամորթ վատ ազգին Յունաց*»<sup>2</sup>: Սմբատ Սպարապետը այս հատվածը նույնպես չի փոխանցում: Բայց հարկ է նշել, որ հապավելով աղբյուրի մանրօրինակ հաղորդումները, Սմբատ Սպարապետը, պահպանում է սկզբնաղբյուրի դատողությունների նպատակաուղղվածությունը, սակայն ընդհանուր գծերով միայն: Շատ չհեռանալով իր սկզբնաղբյուրից՝ մեր հեղինակը գրում է, որ այդ ամենը եղավ*

<sup>1</sup> Սմբատ Սպարապետ, էջ 63:

<sup>2</sup> Մատթեոս Ուռհայեցի, էջ 135:

չարաբարո հույների պատճառով, «*զի հանին գերկիրն Հայոց ի տէրութենէ Հայոց, եւ զքաջ զօրականսն Հայոց սպանին խաբմամբ, եւ զկրտերն դրին զլխաւորս եւ տեղապահս աշխարհին, որ ոչ խոկային գործ քաջութեանն, այլ թէ որպէս զքաջ զօրականսն ի Հայոց եւ ի Յունաց խաւարեցուցեն զաչսն...: Եւ յայսմ ժամանակի խորհեցաւ Տուկիծն խաբանել զհայրապետութիւն յազգէն Հայոց...*»<sup>1</sup>: Մատթեոս Ուռհայեցու մեղադրանքներից հեղինակը փոխանցում է փոքր մասը միայն: Ուշագրավ է այստեղ նաև այն, որ Սմբատ Սպարապետին բավական է մեկ բառ աղբյուրի շեշտադրությունը փոխելու համար: Խոսելով բյուզանդացիների կողմից հայ զորականներին ասպարեզից հեռացնելու մասին՝ նա ավելացնում է նաև «*եւ ի յունաց*»-ը, այդպիսով մեղմելով աղբյուրի կոշտ դիրքորոշումը: Նշենք, որ երկերի հատվածական ու մանրամասն համեմատությունները բացահատում են, որ երանգային այս և նման այլ փոփոխությունները «Տարեգրքի»՝ սկզբնաղբյուրից քաղազրված հատվածներում ընդհանուր բնույթ են կրում: Սմբատ Սպարապետը նույն չեզոքությունն է դրսևորում ոչ միայն բյուզանդական կայսեր և ընդհանրապես բյուզանդացիների բացասական գնահատականները, այլև մահմեդական ամիրաների բնութագրումները փոխանցելիս: Ի դեպ, նկատենք, որ հեղինակի կրավորական դիրքորոշումը վերաբերում է կերպարների ոչ միայն բացասական, այլ նաև դրական բնույթի բնութագրումների փոխանցմանը: Կայսր Վասիլ Բ-ն Մատթեոս Ուռհայեցու համար, անկասկած, սուրբ կայսր է, ով «*սրբութեամբ եւ կուսութեամբ վարեաց զայս կեանս, եւ բարի խոստովանութեամբ մեջեաց ի Քրիստոս Յիսուս, եւ թաղեցին զնա ընդ սուրբ թագաւորսն բարի յիշատակաւ*»<sup>2</sup>: Ժամանակագիրը նշում է նաև Վասիլ Բ-ի՝ իր եղբորը թողած կտակի մասին, որում պատվիրում էր հոր նման հոգ տանել հայ ժողովրդի մասին: Սմբատ Սպարապետը չփոխանցելով Վասիլ Բ-ի դրական բնութագրումները՝ գրում է միայն. «*...մեռաւ Վասիլն, և տայ զթագաւորութիւնն ի Կոստանդին եղբայրն իւր. և յանձնեաց ի նա զաշխարհն Հայոց...*»<sup>3</sup>: Եվ Կոստանդին Դուկասի ու Վասիլ Բ-ի վերաբերյալ «Ժամանակագրությունում» տեղ գտած բնութագրումները պայմանավորված են հայոց պետականության և հայոց եկեղեցու հանդեպ վերջիններիս վարած քաղաքականության նկատմամբ հոգևորական ժամանակագրի դրսևորված վերաբերմունքով: Սմբատ Սպարապետի երկում պատկերն միանգամայն այլ է. նման հարցերում նրա զսպվածությունը համընդհանուր է բնորոշ է զսպվածությունը, որը ունի հեղինակային ոճի բնույթ:

«Տարեգրքի» վերլուծությունը ցույց է տալիս հետևյալը. Սմբատ Սպարապետը ընդհանուր առմամբ պահպանում է սկզբնաղբյուրի ուղղվածությունը՝ արտացոլելով ժամանակագրի գնահատականները, սակայն միևնույն ժամանակ զգալի չափով փորձում է մեղմել վերջինիս կտրուկ շեշտադրումները: Այսպիսի փաստերը կարելի է բացատրել նրանով, որ նա ոչ այնքան պատճենում, որքան

<sup>1</sup> Սմբատ Սպարապետ, էջ 56:

<sup>2</sup> Մատթեոս Ուռհայեցի, էջ 55:

<sup>3</sup> Սմբատ Սպարապետ, էջ 27:

ամփոփում ու համախմբում է սկզբնաղբյուրի հաղորդած տեղեկությունները՝ ձգտելով համեմատաբար անկողմնակալ դիրք զբաղեցնել քաղաքական իրադարձությունները գնահատելիս, որով էլ հենց պետք է բացատրել նրա զսպածությունն ու «դրական չեզոքությունը» քաղաքական կարևորություն ունեցող հարցերն արժարժելիս:

Այսպիսով, ամփոփելով նշենք, որ Սմբատ Սպարապետին ոչ մի կերպ չենք կարող դասել անտարբեր հեղինակների թվին, ում քաղագրությունը սոսկ մեխանիկական աշխատանքի արդյունք է: Այդ են վկայում բնագրերի համեմատության վերը նշված օրինակները: Դրանք խոսում են այն մասին, որ Սմբատ Սպարապետի քաղագրական մեթոդը չի սահմանափակվում զուտ սկզբնաղբյուրի բնագրի կրճատմամբ: Նա, ելնելով գաղափարական և ոճական որոշակի սկզբունքներից, սկզբնաղբյուրի հաղորդումները ենթարկում է նպատակադիր վերամշակման, հավելում կամ հաճախ հապավում է առանձին հատվածներ՝ իր պատկերացումների և համոզմունքների ազդեցությամբ: Ուստի «Տարեգրքի» քաղագրական հատվածը նույնպես կրում է հեղինակի ստեղծագործական աշխատանքի կնիքը:

**Տաթևիկ Աթայան, Քաղագրական եղանակի առանձնահատկությունները Սմբատ Սպարապետի «Տարեգրքում»** - Հոդվածում ներկայացված են Սմբատ Սպարապետի կիրառած քաղագրական եղանակի առանձնահատկությունները: Հեղինակը չի սահմանափակվել սկզբնաղբյուրի պասիվ վերատադրությամբ, այլ աշխատության շարադրմանն անցել է հստակ պատկերացում ունենալով երկի բովանդակային ընդգրկման մասին: Այդ նպատակով նա հավելել, իսկ ավելի հաճախ հապավել է սկզբնաղբյուրի առանձին տեղեկություններ, տարրեր՝ իր ուշադրության կենտրոնում ունենալով նախ և առաջ քաղաքական պատմությունը: Սմբատ Սպարապետը հետևողականորեն վերամշակման է ենթարկում նաև սկզբնաղբյուրի ոճը՝ կրճատելով ինչպես վերջինիս կրոնական բնույթի երկար ծառերը, աստվածաշնչյան մեջբերումներն ու նախանշանների մասին պատմող դրվագները, այնպես էլ փոփոխություններ կատարելով երկի շարահյուսական կառուցվածքում:

**Татевик Атаян, Особенности компилятивного метода в «Летописи» Смбата Спарапета -**

**Tatevik Atayan, The peculiarities of compilation method in Smbat Sparapet's Chronicle** – The article presents the uniqueness of Smbat Sparapet's method of compilation. He isn't restricted only by a passive reproduction of the primary source. Before starting to write his works, Smbat Sparapet had a clear apprehension of its content. That is why he added some information and very

often left out some elements of information of the primary sources – focusing first of all on the political life of the given period. He consistently changed and elaborated also the style of the primary source by shortening the long religious allocutions, citations from the Bible and the episodes which tell about omens thus making changes in the structure of the work.

*Տաթևիկ Աթայան – ԵՊՀ Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոնի հայցորդ,  
պատմության ֆակուլտետի դեկանատի լաբորատոր*

